Արձանագրություն N 4

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար «Գրասենյակային և կենցաղային կահույքի» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/13-01» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «23» մայիսի 2016թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Աղավնի Բուդույան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի,

Անահիտ Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Արման Ղուկասյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան (Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում է հանձնաժողովի անդամ Կարեն Մելքոնյանը (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. Տեղեկատվություն՝ Հայտերում արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելու վերաբերյալ.

1.1 «Ֆոտոն» ՍՊԸ-ն, «Զորաշեն» ՍՊԸ-ն, «Ալեն-Էլեն» ՍՊԸ-ն, և «ՋՈՒԼԻԱՆՆԱ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել են իրենց հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, հետևաբար նշված մասնակիցների հայտերը ևս գնահատվում են բավարար:

1.2 «Հայր և Որդի Գյոդակյաններ» ՍՊԸ-ն չի շտկել իր հայտում արձանագրված անհամապատասխանությունները՝ հետևաբար նշված մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

2.1. **1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 7-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ** -ին.

1-ին չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Սեմանգ» ՍՊԸ-ին,

2-րդ չափաբաժնի մասով՝ «ՍԵՆԴԱ» ՍՊԸ-ին, 3-րդ և 7-րդ չափաբաժինների մասով՝ «Ալեն-Էլեն» ՍՊԸ-ին, 5-րդ չափաբաժնի մասով՝ «Զորաշեն» ՍՊԸ-ին:

2.2. **4-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ** չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«Ալեն-Էլեն» ՍՊԸ** -ին.

4-րդ չափաբաժնի մասով առկա է մասնակիցների կողմից ներկայացված գների հավասարություն:

6-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ –ին, 9-րդ չափաբաժնի մասով՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ին:

2.3. **8-րդ** չափաբաժնի մասով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել **«Ֆոտոն» ՍՊԸ -ին**.

8-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Սեմանգ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովի քարտուղարին.

3.1. Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել համապատասխան հարցումը:

3.2. Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի մայիսի 27-ը ներառյալ ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված փաստաթղթերը:

3.3.Հաշվի առնելով, որ «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ –ն՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 5-րդ և 7-րդ չափաբաժինների մասով, «Ալեն-Էլեն» ՍՊԸ -ն՝ 4-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ չափաբաժինների մասով, «Ֆոտոն» ՍՊԸ-ն՝ 8-րդ չափաբաժնի մասով ներկայացրել են չիմնավորված ցածր գնային առաջարկ (գնային առաջարկը համարվում է չիմնավորված ցածր, եթե այն ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից) և ղեկավարվելով Կարգի 47-րդ կետի 3-րդ ենթակետով՝ ծանուցել ներքոնշյալ կազմակերպություններին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2016 թվականի մայիսի 27-ը ներառյալ, ներկայացնել Կարգի նշված կետով սահմանված լրացուցիչ փաստաթղթային հիմնավորումներ:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

.Ղեկավարվելով Կարգի 49-րդ կետով՝ հանձնաժողովի նիստ հրավիրել 2016 թվականի մայիսի 31-ին, ժամը՝ 12:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝

_____ Սարգիս Արմենակյան

Անդամներ՝

_____ Աղավնի Բուդուլյան

_____ Անահիտ Ավագյան

_____ Արման Ղուկասյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան